Հավելված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/64 ծածկագրով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ.
հուլիսի 17-ի թիվ 2 արձանագրության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին
Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/64**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր քաղաքի պուրակի քանդման, մաքրման և բարեկարգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/64 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 17-ի թիվ 2 արձանագրությամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Հ/Հ	**Չափաբաժնի անվանումը**	**Մասնակցի անվանումը՝ ըստ հայտի ներկայացման հերթականության**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1-ին	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն թիվ 1 հասցեում գտնվող պուրակի քանդման, մաքրման և բարեկարգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ	«Արտ նախագիծ» ՍՊԸ		X	Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում են փաստաթղթերը, ինչպես նաև Հավելված 2-ով ներկայացվող «Գնային առաջարկ»-ը
		«Սարդարյանշին» ՍՊԸ	X		

Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշվել և հայտարարվել են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

Չափաբաժնի N	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X”**	**Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/**
1-ին	«Սարդարյանշին» ՍՊԸ	**X**	1,050,000.00

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահաևտված հայտ ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ընտրություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/64 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան